Հայ ժողովրդի պատմության Ժամանակագրություն

1917 օգոստոս 15 Ալավերդու պղնձագործ բանվորների գործադուլը:

օգոստոս 18 Շուշիում լույս տեսավ «Նեցուկ» թերթը՝ ՌՍԴԲԿ տեղական կազմակերպության օրգանը, Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ:

սեպտեմբեր 29 Թիֆլիսում բացվեց հայկական ազգային համախորհրդակցությունը, որտեղ ընտրվեց Հայոց ազգային խորհուրդ:

հոկտեմբեր 2 Թիֆլիսում բացվեց Կովկասի բոլշևիկների առաջին համագումարը:

հոկտեմբեր 25 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը (նոյեմբերի 7 նոր տոմարով) Ռուսաստանում:

նոյեմբեր 15 Թիֆլիսում կազմվեց Անդրկովկասյան կոմիսարիատը:

դեկտեմբեր 1 Խորհրդային Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Մոսկվայում ստեղծվում է հայկական գործերի կոմիսարիատ, որի կոմիսար է նշանակվում ականավոր պետական գործիչ Վառլամ Ավանեսովը, իսկ տեղակալ՝ կոմունիստ-բանաստեղծ Վահան Տերյանը:

դեկտեմբեր 10 Թիֆլիսում բացվում է կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարը, որը որոշում է ընդունում Կովկասում անհապաղ խորհրդային իշխանություն ստեղծելու մասին:

դեկտեմբեր 16 Խորհրդային Ռուսաստանի ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է Բաքվի խորհրդի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար:

դեկտեմբեր 21 էջմիածնում փակվեց Գևորգյան ճեմարանը:

դեկտեմբեր 29 Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհն ընդունեց «Թուրքահայաստանի» մասին որոշում:

1918 հունվար 19 Բաքվում լույս տեսավ «Բանվորի խոսք» շաբաթաթերթը:

փետրվար 10 Թիֆլիսում բացվում է անդրկովկասյան սեյմը:

մարտ 3 Ստորագրվեց Բրեստի պայմանագիրը:

մարտ 12 Թուրքական բանակը գրավում է Կարինը (Էրզրում):

ապրիլ 13 Խորհրդային Ռուսաստանի կառավարության բողոքի հեռագիրը թուրքական բանակի՝ դեպի Անդրկովկաս առաջ շարժվելու և խաղաղ բնակչությանը բնաջնջելու առթիվ:

ապրիլ 16 Թիֆլիսում լույս է տեսնում «Տեղեկատու» օրաթերթը՝ առաջին խորհրդային թերթը հայերեն:

ապրիլ 22 Անդրկովկասյան սեյմը Անդրկովկասը հայտարարեց անկախ:

ապրիլ 25 Բաքվում կազմվում է ժողովրդական կոմիսարների խորհուրդ Ստ. Շահումյանի գլխավորությամբ:

ապրիլ 25 Թուրքական բանակը գրավեց Կարսը:

մայիս 15 Թուրքական բանակը գրավում է Ալեքսանդրապոլը:

մայիս 22 Սարդարապատի չորս օրյա հերոսամարտը:

մայիս 25 Ղարաքիլիսայի հերոսամարտը: (Տևեց մինչև մայիսի 28-ը):

մայիս 26 Ցրվում է անդրկովկասյան սեյմը: Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հայտարարվում են անկախ հանրապետություններ: (Մինչև մայիսի

մայիս 28 Հայկական ուժերի կողմից թուրքական բանակի պարտությունից հետո Հայաստանը հայտարարվեց անկախ (առաջին հանրապետության օր):

հունիս 4 Բաթումում Թուրքիայի և Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունների միջև կնքվում է պայմանագիր, որով Թուրքիան զավթում է Հայաստանի մեծ մասը:

հունիս 22 Մոսկվայում լույս է տեսնում հայկական գործերի կոմիսարիատի պաշտոնական օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը:

հուլիս 19 Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվում է Խորհրդային Ռուսաստանի կառավարության որոշումը Ռուսաստանում գոյություն ունեցող հայ բուրժուա-նացիոնալիստական հակահեղափոխական կազմակերպությունների՝ ազգային խորհուրդների, կոմիտեների, պաշտպանության խորհրդի և հայկական բուրժուական այլ կազմակերպությունների լիկվիդացման մասին:

հուլիս 31 Բաքվում ժամանակավորապես ընկնում է խորհրդային իշխանությունը: Ստեղծվում է «Կենտրոկասպիի բռնատիրություն»:

սեպտեմբեր 18 Բաքվում սպանվեց բոլշևիկ քաղաքագետ Մելիք Մելիքյանը: (Ծնվ. 1868թ.-ին, Ելիզավետպոլում (Գանձակ):

սեպտեմբեր 19 Արարայի (Պաղեստին) ճակատամարտը: Արևելյան (Հայկական) լեգեոնի մարտիկների հաղթանակը թուրքական զորքերի դեմ:

սեպտեմբեր 20 Բաքվի 26 կոմունարների գնդակահարությունը անդրկասպյան ավազուտներում:

սեպտեմբեր 22 Երևանում լույս է տեսնում բոլշևիկյան «Խոսք» թերթը:

նոյեմբեր 19 Կ.Պոլսում վախճանվեց բանաստեղծ, պատմաբան Մաղաքիա Օրմանյանը: (Ծնվ. 1841թ.-ին):

դեկտեմբեր 4 Զորավար Անդրանիկի ղարաբաղյան ռազմարշավի ավարտը:

(Շարունակելի)

Հասարակական

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

ՄԱՍՈՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՈՒ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԸ

Աշխարհի տարբեր երկրների իշխանությունների գրեթե բոլոր ոլորտներում իր ազդեցությամբ հայտնի, 18-րդ դարում Արեւմտյան Եվրոպայում ի հայտ եկած եւ ընդմիշտ խորհրդավորությամբ պարուրված մասոնական շարժման մասին մերթ ընդ մերթ հայտնվող գրքերն ու հոդվածները հետաքրքրական նյութեր են պարունակում այդ շարժման անդամների եւ հայոց պատմության ամենաողբերգական շրջանի իրադարձությունների գլխավոր դերակատարների միջեւ գոյություն ունեցած կապերի վերաբերյալ: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք ինտերնետային կայքէջերից վերցված երկու նյութերից առաջինը, որը մի փոքր հատված է ԱՄՆ-ում 2001 թ. «Արկեյդ» հրատարակչատան լույս ընծայած Ջասպեր Գոդվին Ռիդլիի «Մասոնները: Աշխարհի ամենահզոր գաղտնի հասարակության պատմությունը» (The Freamasons. A History of the World՝s Most Powerful Secret Society) գրքից:

Հունական առաջին մասոնական օթյակը հիմնվել է Կորֆուում 1814-ին եւ շուտով տարածվել Հունաստանի տարբեր շրջաններում: Դրանցից մեկը՝ «Ֆելիքի էթերիա» (բարյացակամ հասարակություն) օթյակը ղեկավարել է 1821-ին թուրքական իշխանության դեմ հրահրված Հունաստանի հեղափոխությունը, որն էլ ի վերջո (1830-ին) անկախություն է բերել հելլեններին:

Մի հույն մասոն մեծ դերակատարություն է ունեցել սուլթանի տապալման եւ երիտթուրքերի շարժման ստեղծման գործում: Կոստանդնուպոլսում ապրող հույն ազնվականի ընտանիքում 1833-ին ծնված Կլեանտի Սքալյերիսը, որը հետագայում դառնում է մեծահարուստ բանկիր, երեսուն տարեկանում ընդունվում է մասոնության շարքերը՝ անդամակցում Կոստանդնուպոլսում գործող ֆրանսիական «Մեծ արեւելք» օթյակին: Նա ընկերական սերտ հարաբերություններ է ունենում սուլթանի կառավարության բարձրաստիճան անդամ Միդհատ փաշայի հետ, որը երիտթուրքերի գաղտնի առաջնորդն էր: Վերջինս մասոնության շարքերն էր մտել դեռ Անգլիայում սովորելու տարիներին: Թուրքիա վերադառնալով նշանակվել էր Դանուբի շրջանի կառավարիչ եւ հաստատել կրոնական հետապնդումներից զերծ մի իշխանություն: 1872-ին մի կարճ ժամանակ դարձել էր թուրքական կառավարության գլխավորը՝ մեծ վեզիրը:

Սքալյերիսն ու Միդհատը միասնական ջանքերով կարողացել էին ազդել սուլթան Աբդուլ Ազիզի ազգականներից (եղբորորդի կամ քեռորդի) գահաժառանգ իշխան Մուրադի վրա, որը, հետաքրքրությամբ լսելով նրանց լիբերալ առաջադիմական հայացքները եւ ընդառաջելով նրանց հորդորներին, 1872-ին ընդունվել է մասոնության շարքերը՝ միանալով ֆրանսիական «Մեծ արեւելքի» հովանավորությամբ Կոստանդնուպոլսում գործող հունախոսների օթյակին:

1876-ին, երբ Բուլղարիան ապստամբում էր թուրքական իշխանության դեմ եւ Ռուսաստանն ի պաշտպանություն Բուլղարիայի պատրաստվում էր պատերազմել Թուրքիայի հետ, Միդհատ փաշան հեղաշրջում է իրականացնում երկրում, տապալում է Աբդուլ Ազիզին եւ իշխան Մուրադին հռչակում երկրի նոր ղեկավար՝ սուլթան Մուրադ է անունով: Սակայն ազատամիտ մասոնը երկար չի իշխում: Ընդամենը մի քանի ամիս անց մեկ այլ հեղաշրջման հետեւանքով գահ է բարձրանում բռնակալ Աբդուլ Համիդ Բ-ն, որն իր 33 տարիների իշխանության օրոք արժանանում է միջազգային հակակրանքի թե՛ բռնապետական քաղաքականության եւ թե՛ մանավանդ սեռական շվայտանքների համար: Իր գահակալության սկզբնական շրջանում Աբդուլ Համիդը Միդհատ փաշային պահում է իր կառավարությունում որպես մեծ վեզիր, բայց հետո ծրագրում է նրա սպանությունը: Իսկ Մուրադին նա բանտարկված է պահում պալատում: Մուրադի փախուստը կազմակերպելու Սքալյերիսի փորձերն անհաջողության են մատնվում: Մուրադը մահանում է 1904-ին՝ 28 տարի պալատում բանտարկված մնալուց հետո:

Աբդուլ Համիդն իշխում է մինչեւ 1909 թ., երբ երիտթուրքերի հեղափոխությամբ գահընկեց է լինում եւ բանտարկվում: Երիտթուրքերի առաջնորդ Թալեաթ բեյը (որը հետագայում դարձավ Մեհմեդ Թալեաթ փաշա) մասոն էր եւ Թուրքական «Մեծ

արեւելք» օթյակի մեծ վարպետը: 1917-ին, երբ Թուրքիան եւ իր դաշնակիցներ Գերմանիան ու Ավստրիան տանուլ էին տալիս պատերազմը, նա դառնում է մեծ վեզիր՝ թուրքական կառավարության ղեկավար: Հայերը նրան պատասխանատու են համարում կոտորածների եւ Հայաստանի թուրքական նահանգի բնիկ ազգաբնակչության փաստական ոչնչացման համար: Երիտթուրքերից շատերն էին մասոններ: Սակայն ոչ նրանց Թուրքիայի արդիականացման առաջադիմական գաղափարները, ոչ էլ մասոնական սկզբունքները խոչընդոտ չդարձան, որ նրանք պաշտպանեն Հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագիրը:

Երբ Թուրքիան պարտվեց պատերազմում, Մեհմեդ Թալեաթ փաշան ստիպված եղավ հրաժարական տալ 1918-ին մեծ վեզիրի իր պաշտոնից: Հաջորդ տարի նա լքեց Թուրքիան եւ մեկնեց Բեռլին: 1921-ին նրան Բեռլինում սպանեց մի ուսանող, որը չէր մոռացել կոտորածները:

Հաջորդ առաջնորդը Թուրքիայում դարձավ Մուստաֆա Քեմալը, որին անվանեցին Քեմալ Աթաթուրք: Նա էլ էր մասոն: Նրան իտալական օթյակի անդամ էին ընդունել Մակեդոնիայում: Նա թուրքական բանակի հրամանատարն էր, երբ հաղթանակած դաշնակիցները (Բրիտանիան եւ Ֆրանսիան) խրախուսեցին հունական բանակին, որ հարձակվի Թուրքիայի վրա, որպեսզի վերջինիս ստիպեն ընդունել խաղաղության իրենց առաջարկները:

Հույները կարողացան թուրքերին հետ մղել մինչեւ Սաքարիա գետը (մոտ 250 մղոն), բայց այդտեղ Մուստաֆա Քեմալը նրանց կանգնեցրեց եւ կարողացավ քշել Թուրքիայից դուրս: Դա խայտառակ պարտություն էր հույների համար, եւ նրանք երբեք չեն ներում Քեմալին ու թուրքերին Զմյուռնիայում տեղի ունեցած էթնիկական զտումների համար:

Քեմալը հետագայում վերացրեց սուլթանական ու խալիֆայական իշխանությունը երկրում եւ Թուրքիան հռչակեց ոչ կրոնական հանրապետություն՝ զերծ պատերազմներից եւ միջազգային դաշնություններից: Տասնվեց տարի որպես բռնապետ իշխելուց եւ այդ ընթացքում մեծ քանակությամբ վիսկի ըմպելուց հետո նա մահացավ 1938-ին:

Պատրաստեց Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ

Ազգ

Մշակութային

ՀԱՅԱԶԳԻ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ ԵՐՈՒՍԱՂԵՄ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Հարցազրույց ֆրանսահայ գիտնական Արմեն-Կլոդ Մութաֆյանի հետ

- Պարոն Մութաֆյան, ամիսներ առաջ մեկնեցիք Միացյալ Նահանգներ՝ մասնակցելու «Պատմական Հայաստանի նահանգներն ու քաղաքները» շարքի՝ Երուսաղեմին նվիրված գիտաժողովին: Որքան հայտնի է, նախորդ գիտաժողովները վերաբերում էին Արեւմտյան Հայաստանի եւ այժմյան Թուրքիայի մնացյալ տարածքի հայաշատ վայրերին՝ Սեբաստիա, Կարին, Խարբերդ... Խնդրում եմ համառոտ պատմել համաժողովում կարդացած Ձեր զեկուցման մասին:

- Լոս Անջելեսի համալսարանի դասախոս Ռիչարդ Հովհաննիսյանը հայության վերաբերյալ, իրոք, հետաքրքրական ձեռնարկներու շարք մը պատրաստած է:

Ես երկու անգամ մասնակցած եմ հիշյալ գիտաժողովներուն. մեկը նվիրված էր Կիլիկիային, մյուսը՝ Անիին: Լավ է, որ ժողովներու ընթացքին կարդացված զեկուցումները լույս կտեսնեն առանձին գիրքով: Նման չորս գիրք արդեն կա: Իմ զեկուցումս հայոց թագավորության հետ Երուսաղեմի ունեցած

առնչություններուն կվերաբերի: Երուսաղեմի մեջ երեք հայ թագուհիներ եղած են, սակայն հայկական վավերաթուղթերուն մեջ այդ մասին հիշատակություն չկա: Եղած աղբյուրները լատին կամ արաբական են: 1099թ. խաչակիրները գրավեցին Երուսաղեմը, այնուհետեւ անցան Կիլիկիան եւ շփման մեջ մտան հայ իշխաններու հետ: Խաչակիրներու մյուս մասը գնաց Եդեսիա՝ Ուրֆա: Այնտեղի հունադավան հայ իշխանները, Եդեսիո կառավարիչ Թորոսը, որ ենթակա էր բյուզանդական կառավարության, վտանգի մէջ էին (շրջապատված էին թուրքերով): Խաչակիրներեն Բաղդուինը Թորոսին հեռացուց եւ ինք նստավ անոր տեղ: Եդեսիան դարձավ առաջին լատին պետությունը, թեեւ բնակչության կեսեն ավելին հայ էր: Որպեսզի այդ հայերուն տիրե, դիվանագիտական քայլ պետք էր անել՝ ամուսնանալ հայ իշխանուհիի մը հետ: Այո, բացառություն չէր, քանի որ խաչակիրները արեւելք կուգային ու պիտի հոն հաստատվեին: Ուրեմն՝ հայ իշխանուհիներ պիտի փնտռեին իրենց համար: Մահմեդական իշխանուհի չէր կրնար ըլլալ: Հույն իշխանուհին նույնպես բացառված էր, քանի որ ատելություն կար անոնց հանդեպ: Ասորիները, ճիշտ է, քրիստոնյա էին, սակայն ֆեոդալական կառույց չունեին, իշխանի, իշխանուհիի գաղափար չկար, կմնային հայերը: Բաղդուին կոմսը, Երուսաղեմի գրավումեն ետք, դարձավ Երուսաղեմի թագավոր, եւ լատին առաջին թագուհին հայ տիկինը եղավ: Հիշյալ Բաղդուինին հաջորդեց մեկ այլ Բաղդուին, որուն հայ իշխանուհի կինը Մաֆիա կկոչվեր, անունը հունական էր, որովհետեւ հայրը հունադավան էր:

1118 թվականին, Բաղդուինի մահեն ետք՝ Բաղդուին երկրորդը, որ Եդեսիայեն էր, գնաց Երուսաղեմ եւ հաջորդեց առաջինին: Երուսաղեմի երկրորդ թագուհին ալ հայ էր: Սովորաբար իշխանուհիները կմեղադրվեին, եթե երեխա չունենային եւ կամ միայն աղջիկներ ունենային: Բաղդուին առաջին կինը երեխա չունեցավ. ամուսինը միասեռական էր: Իսկ Բաղդուին երկրորդի կինը չորս աղջիկ ունեցավ: Բնականաբար պիտի իշխէր անոնցմե մեկը: Թագուհի դարձավ ավագ դուստրը՝ Մելիզանդը: Երուսաղեմի պատմության մեջ ան հայտնի է որպես փայլուն դիվանագետ-թագուհի: Ան ամուսնացավ ֆրանկ ասպետի մը հետ՝ Ֆուլկ անունով, սակայն իր գործունեությամբ մշտապես կզգացներ, որ թագավորողը ինքն է: Մելիզանդի ամուսինին մահեն ետք անոր երկու զավակներեն առաջինը դարձավ թագավոր՝ Բաղդուին երրորդ, սակայն իշխողը նոր հայ թագուհին էր: Թագուհին նաեւ մեծ արվեստասեր մըն էր: Ֆրանսայի Ազգային գրադարանին մեջ լատիներեն ձեռագիր մը կա, որուն էջերը՝ փոխանակ թիվերու, հայ տառեր կկրեն: Ինչպես կտեսնենք, Մելիզանդ թագուհին հետը հայ արվեստագետներ բերած էր. ուրեմն՝ 1140 թվականին գիրք կազմողը հայ արվեստագետ մըն էր:

12-րդ դարու եպիսկոպոս, լատին պատմաբան մը՝ Կյուրոս քաղաքեն, կգրե, թե Մելիզանդ երեսուն տարի փայլուն կերպով թագավորած է, որովհետեւ չափազանց խելացի, բացառիկ մեկը եղած է:

Ուրիշ հետաքրքրական բան մը. որեւէ աղբյուր չկա, թե Երուսաղեմի Ս. Հակոբեանց վանքը ե՞րբ կառուցված է, ի՞նչ պայմաններու մէջ, ո՞վ շինած է... Սակայն հետաքրքրական զուգադիպություն ալ կա. արվեստաբաններու կարծիքով եկեղեցին կառուցված է 12-րդ դարու կեսերուն, իսկ այդ Մելիզանդ թագուհիի ժամանակն էր: 1142-ին կամ 1443-ին Երուսաղեմի մէջ լատին մեծ ժողով մը տեղի ունեցած է, որուն հրավիրված էր նաեւ Հայոց կաթողիկոսը՝ Գրիգոր Գ (Երրորդ) Պահլավունին՝ Ներսես Շնորհալիի մեծ եղբայրը: Այդ նույն պատմաբանը կգրե, որ Հայոց կաթողիկոսը շուքով ընդունվեցավ, քանի որ մեծ դեմք էր: Բացառված չէ, որ վանքի կառուցման որոշումը այս երկու բացառիկ անձնավորություններու հանդիպումին արդյունքը եղած ըլլա: Ուրիշ աղբյուր չկա: Անկարելի է նաեւ, որ Գրիգոր Գ Պահլավունի հանդիպած չըլլա Մելիզանդ թագուհիին: Լատին պատմաբանը մեծ հիացմունքով կնկարագրի կաթողիկոսին մուտքը ժողով: Մելիզանդ թագուհին նաեւ կրոնասեր էր: Ուրեմն, հավանականություն կա, որ թագուհին որոշ դեր ունեցած ըլլա վանքի կառուցումին մէջ:

Այսպիսով, Մելիզանդը Երուսաղեմի թագուհին էր, մյուս քույրը Անտիոքի իշխանին հետ ամուսնացավ, երրորդը Տրիպոլիի կոմսի կինն էր: Լատին չորս պետություններեն երեքին վրա հայ իշխանուհիներ կիշխեին: Իսկ Եդեսիո կոմսին մայրը հայուհի էր: Ամենուրեք հայ իշխանություններ կգործեին:

Երբ 1187 թ. Երուսաղեմը գրավվեցավ Սալահեդդինի կողմե, Անգլիո թագավորը՝ Ռիչարդ Առյուծասիրտը, սկսավ որոշ հատվածներ ետ գրավել, սակայն առանց Երուսաղեմի: Եդեսիո կոմսությունն արդեն կորսված էր, վերակառուցվեցավ Անտիոքի իշխանությունը, բայց ավելի փոքր, Տրիպոլիի կոմսությունը՝ նույնպես փոքր եւ, վերջապես, Երուսաղեմի թագավորությունը, որ մայրաքաղաք հռչակեց Աքքան, որ նաեւ նավահանգիստ էր: Եվ եղավ Երուսաղեմի թագավորություն՝ առանց Երուսաղեմի:

Լատին թագավորություն մըն ալ հիմնվեցավ Կիպրոսի մեջ, ֆրանսական Լուզինյաններու իշխանության տակ: Լեւոն թագավորը իր անդրանիկ աղջիկը ամուսնացուց Երուսաղեմի թագավորի՝ Հովհաննես Բրիենցիի հետ. ան դարձավ Երուսաղեմի երրորդ թագուհին: Լեւոն թագավորը կկտակե, որ իրեն պետք է հաջորդե կրտսեր դուստրը՝ Զապելը: Եթե

ավագ աղջիկը հաջորդեր, Կիլիկիան պետք է Երուսաղեմին պատկաներ: Հայոց թագավորությունը գոյատեւեց Զապելի շնորհիվ:

- Գիտաժողովի ուսումնասիրությունների շրջանակը հետաքրքրակա՞ն էր:

- Շա՜տ: Մանավանդ, որոշ դիցաբանական նյութեր ալ ներկայացվեցան: Այժմ, ինչպես գիտեք, Երուսաղեմի կացությունը դժվարին է: Եկեղեցիին վիճակն ալ փայլուն չէ: Նորայր արքեպիսկոպոս Պողարյանի մահեն ետք մեկը չկա, իսկապես գիտուն մեկը, որ գործե այնտեղ: Հայաստանի Մատենադարանեն ետք Երուսաղեմինը հայ ձեռագրերու երկրորդ հավաքածուն է աշխարհի մեջ: Կիլիկիայի ամենաշքեղ ձեռագրերը կգտնվին Ս. Հակոբի ձեռագրատան մեջ:

Ամբողջ աշխարհին մեջ Թորոս Ռոսլինեն յոթ նմուշ պահպանված է, անոնցմե չորսը՝ Երուսաղեմ կգտնվի: Այստեղ են նաեւ Գերան թագուհիի 1270 թվականի ամենանշանավոր ձեռագրերը: Թանգարանին մէջ նաեւ երկու մետրեն ավելի երկարություն ունեցող սաթե գավազան մը կա, որուն ծայրը արծաթ է: Ան, սակայն, ցույց չի տրվիր այցելուներուն: Ըստ ավանդության՝ Հեթում թագավորին գավազանն է, բայց ո՞ր Հեթումի, փաստ չկա: Բավական ուսումնասիրած եմ օտար դիվաններ եւ եզրակացուցած, որ Հեթում 2-րդին պատկանած կըլլա, եթե հաստատվի, որ ան Երուսաղեմ մտած է 1299 թվականին՝ որպես մոնղոլներու դաշնակից:

- Մի հարց եւս. ե՞րբ հիմնվեցավ Սուրբ Հակոբա վանքը:

- Միքայել Չամչյանը կգրե, որ 1311 թվականին Երուսաղեմ գիտաժողով մը հրավիրվեցավ, սակայն Երուսաղեմի պատրիարքը մերժեց այդ գիտաժողովին եզրակացությունները եւ ուզեց բաժնվիլ: Գնաց Մամլուք սուլթանին քով, որպեսզի զինք կարգեն անկախ պատրիարք: Հիմնվեցավ պատրիարքարանը, որն այնուհետեւ ենթարկվեցավ Ամենայն հայոց կաթողիկոսին: Որքան ալ ճշգրտենք, նորեն Միքայել Չամչյանին կհանդիպենք: Ուրեմն, 14-րդ դարու կեսերու հիմնվեցավ Երուսաղեմի պատրիարքարանը: Թվականները դեռեւս ճշտված չեն: Երբ կհետեւինք շղթային, նորեն կհասնինք Չամչյանին, այսինքն՝ 1785 թ.: Դժբախտաբար, ինչպես այդ շրջանի բոլոր պատմաբաններուն քով, Չամչյանի մոտ ալ աղբյուրները չեն նշված:

Լոս Անջելեսի գիտաժողովի քննարկումները մերթ ընդ մերթ զգացական ու կրքոտ վեճերու վերածվեցան: Վերջին զեկուցողը Սոսի Անտեզյանն էր՝ «Երուսաղեմի կեդրոնական դերը աշխարհի հայերուն համար» թեմայով, ուր խոսվեցավ նաեւ Երուսաղեմի՝ որպես երեք մեծ կրոններու սրբազան քաղաքի մասին տարածք մը, որ միջազգային քաղաքական խնդիրներու լուծման կարիք ունի եւ, հետեւաբար, քաղաքին միջազգայնացումը կրնա հայոց կացությունը բարեփոխել ու կայունացնել:

Գիտաժողովը փակվեցավ մեծ հանդիսավորությամբ: Եզրափակիչ խոսքին մէջ պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը հայտարարեց, որ այս շարքը պիտի ընդհատվի Մեծ եղեռնի 90-ամյակին առիթով, որպեսզի կարելի ըլլա կազմակերպել այդ օրվան նվիրված միջազգային նոր գիտաժողով մը:

Հարցազրույցը ԳՈՀԱՐ ԱՃԵՄՅԱՆԻ, Փարիզ, փետրվար, 2005 թ.- ԱԶԳ

Բանաստեղծություն

Վահան Գևորգյան

Կապույտ երկնքում լողում է ահա
Թեթև ու ճերմակ ամպը թափանցիկ,
Աչքս արևին նրան եմ խանդում
Իմ սերը անոգ հավք է երկնքում:

Աչքերիս փարված թախիծը վկա
Ակունք՝ հույզերիս, ակն է երազիս,
Իմ սերը անհող հավք է երկնքում,
Բախտիս արևն է, ամենո՛ւր ներկա:

Սիրահարի պես ծովում ծփացող՝
Երազներս ջինջ՝ ալիքներ անծիր,
Սիրո, կարոտի ափերին մարող:

Մտքումս հաճախ չափ ու ձև անում
Քեզ մոտենալու ելքն եմ փնտրում:
Սրտիս խորքերից երգ եմ արարում:
***
Սրտիս խորքերից երգ եմ արարում,
Կասկածի մթին ամպերին լքած,
Իմ երազների ակունքում ծնված՝
Հույզերս անվերջ դեմքիդ են փարվում:

Ես քեզ եմ կրկին մտքումս օրհնում,
Ինքդ էլ չգիտես, որ իմ կարոտը
Հազար սրտերից քոնն է փնտրում.
Նայիր աչքերիս իմ սիրտը վկա:

Երազանքը ծով՝ ալիքված ծփում,

Սրտումս ծնված բոց ու հրդեհը՝
Աչքերիդ խորքից դեմքիդ է փարվում:

Սուր թարթիչներիդ, շիկնած՝ շուրթերիդ,
Տարածքում կրկին մոլոր մանկան պես
Ես ինձ կորցրած ելք եմ փնտրում:
***
Ես ինձ կորցրած ելք եմ փնտրում,
Մանուկ տարիքում մայրս էր արթուն
Մութ ճամփաներին իմ ձեռքը բռնած
Միշտ խրախուսում, հավատս կոփում:

Տարիների հետ, երբ հասակ առա
Սերն ինձ այցելեց տեսքով աղջկա,
Ու շատերի պես սերն ինձ ուղենիշ
Նա էր լուսավոր փարոսը նավիս:

Երբ երազներիս ճամփեքով անցա,
Հիացումներից հիասթափության
Պահերն ապրեցի, սերն այլափոխվեց:

Մորս, կնոջս, սիրածիս անգամ
Հաճախ շրջանցեց ու սիրտս գերեց,
Զավակիս նման թանկ ես հարազատ:
***
Զավակիս նման թանկ ես հարազատ...
Սիրո կանթեղը միշտ վառ ես պահում
Ու բախտի ճամփին միամիտ սիրտս
Ձկնորսի նետած ուռկանն է մտնում:

Երբ ամեն անգամ օտար ջրերում
Ձկան պես ազատ լողում եմ անհոգ
Սերն հայրենիքի հմայքով թովիչ
Ինձ իմ մանկության երգով է գերում:

Իր հմայքներով հաղթում ամենուր
Ու չկա մի ուժ հավասար նրան
Ասում են անգամ մահին է գետնում:

Սերն հայրենիքի ակունքն է գոյի:
Սերն այլափոխվում ու ամենուրեք
Հույսն է արարման ճամփեքին բախտի:
***
Հույսն է արարման ճամփեքին բախտի,
Երբ թոթովախոս մանուկ ենք անգետ,
Աստծուց էլ հզոր մեր մայրը անգին՝
Մեր հայրենիքի պատկերն է կրում:

Երբ մոր շուրթերից վշտից ողբակոծ
Ճիչը բողոքի երկինք է թռչում՝
Հայրենի հողին կայծակն է զարկում՝
Սիրտը զավակի՝ թրի պես խոցում :

Եվ ամենուրեք չարին հանդուրժող
Աստծո դեմ հաճախ մայրն է ընդվզում
Աստվածն ինքն էլ մանուկ է դառնում:

Աերն՝ աստվածային, սերն է մայրական
Ու մանկան համար՝ մայրը սիրասուն
Ապրում է հավերժ ու չի ծերանում:
***
Ապրում է հավերժ ու չի ծերանում,
Ամեն պատանի իր մտքում արդեն
Հավատում է, որ էլ չի՛ ծերանա՛,
Իր սիրած յարից չի զատվի բնավ:

Սիրահարները չունեն ժամանակ,
Օրերն ակնթարթ ու կարճ են թվում,
Համբույրից թովիչ համբույրն է միայն
Եվ առանց սիրո աշխարհն է ունայն:

Ծանոթ-անծանոթ բոլոր հին ու նոր
Աստվածների շուրթերից պոկված
Սիրո խոսքերով տիեզերքն է լի:

Արևի նման սերն է հարատև
Աղքատ ու հարուստ և գոռոզ արքան
Գերված ենք քեզնով քո ճորտը հավետ:
***
Գերված ենք քեզնով, քո ճորտը հավետ,
Հրաշք է սերը աշխարհում համայն
Սիրո ճամփան է հավերժ ու անվե՛րջ,
Սերն Հայրենիքի՝ արև է անշեջ:

Մոր ու սիրածի, ո՛ւ սերը աստծո՝
Նույն ակը ունեն ու նույն ակունքը,
Ծնված օրվանից ներկա են նրանք,
Բայց Հայրենիքն է անբաժան մեզնից:

Կյանքի տարբեր պահերին հաճախ,
Գտնում, կորցնում, ապրում ենք ու կանք՝
Խինդ ու ցավն էլի ամենուր ներկա:

Ունայն ու սին է փառքը հերոսի
Երբ զավակները իր հայրենիքի
Օտար երկրում բախտ են որոնում:
***
Օտար երկրում բախտ են որոնում,
Ու տարված խաղով, մանուկ են թվում
Կարոտն ամենուր դռներն է խառնում
Կանչն հայրենիքի կորչում է մթնում:

Կինը երեխա զավակ է տենչում

Այր մարդը մտքում մայր է որոնում
Մեր կոչված հույզը ալիքված գալիս
Ալեբախվում է ծավալն է փոխում:

Ծափ ու ծիծաղով օրերն են չվում,
Խաբվում են խանդից, օտար խաղերից,
Սատանից հզոր խանդն է կախարդիչ:

Դատարկ ու սին է աշխարհը ունայն,
Երբ հայրենիքիդ զինվորն ես արթուն
Սերն հայրենիքի օվկիան է անհուն:
***
Սերն հայրենիքի օվկիան է անհուն
Թե որ սատանից չես գայթակղվում
Բնավ չի խաբի հմայքն օտարի
Քո հարենիքից դու չես օտարվի:

Օտարի սերը հպանցիկ ժամանց,
Օտար կնոջից զավակը ծնված
Տուն-դարձի համար պատնեշ է անանց
Քո հայրենիքից դու ես օտարված:

Մոր հայրենիքն է աշխարհը նրա
Քո հայրենիքում օտար է միշտ նա
Մայրն է զավակի աշխարհն հայրենի:

Թե մորդ փոխես՝ հայրենիք չունես,
Տղամարդն անվերջ մայր է որոնում,
Մոր աշխարհով է աշխարհը չափվում:
***
Մոր աշխարհով է աշխարհը չափվում
Մայրն իր մանկան, սերն է կաթոգին,
Փառքը հավիտյան, ծովն՝ հարստության
Ուժը իր բազկի՝ միտքն իմաստության:

Մոր շուրթից պոկված բառն է առաջին,
Մանկան սրտի մեջ ծիլեր արձակում
Եվ ապ ու պապի օրինանքով արդեն
Ոչ մի թշնամի անպարտ չի թվում:

Հազար մարտերից հազար տարիներ
Հաճախ պարտվել տնից տարագիր,
Բայց միշտ դարձել են տունը հայրենի:

Աշխարհը մի ծով ու մենք նավազներ
Մրրիկ փոթորիկ մեր գլխով դարձան
Մայրը հավատն է ու լույսը մեր տան:
***
Մայրը հավատն է ու լույսը մեր տան
Մեր երազների արևն հավիտյան,
Վաչկատուն ցեղեր եկան ու անցան
Սրբեցին տարան հուշ ու հիշատակ:

Հողին խառնեցին մեր արյունը տաք,
Մեր երազն անվերջ մեռավ ու հառնեց
Ու մեր երազի պատկերն հարատև
Վիշապներ սանձող լեռն է Արագած:

Լանջերն ի վար աղբյուրներ հազար,
Աշխարհին հսկող լուսավոր մի աչք
Տունը շեն պահող բերդ ու ամրոց:

Մեր երազներում հավիտյան ներկա,
Դարձի ճամփեքին փարոսներ լույսի
Լեռները վկան Հայոց աշխարհի:
***
Լեռները վկան Հայոց աշխարհի
Մեր լեգենդների դիցերը անպարտ,
Մեզ հետ են նրանք դարեր շարունակ
Մեր մտքում արթուն ապրում են ու կան:

Նեմրութից՝ Վարագ, Սիփանից՝ Տավրոս,
Մեր նախնիների ձայներով լեցուն
Դաշտեր ու ձորեր անուն առ անուն
Հավերժ անդադրում մեզ տուն են կանչում:

Ով որ սիրտ ունի, բլթակն է հայի
Ականջալուր է երկինք պատռող
Շանթեր բեկանող կանչ ու որոտին:

Մեր թուրը արծաթ՝ սերված կայծակից
Զարկեր նվիրեց իր նենգ թշնամուն
Թուր էր դարձավ խաչ ու մենք խաչակիր:
***
Թուր էր դարձավ խաչ ու մենք խաչակիր
Աշխարհն էլ փոխվեց ու սերը խաչի
Տենչ ու երազանք անվերջ խաճեց՝
Զինվորը դարձավ խաչով քահանա:

Բերդի փոխարեն մատուռ ու խաչքար,
Մորը մոռացած՝ ներբողներ Աստծուն
Կարծես թե նա էր մեզ օրոր ասել
Մեր հայրենիքի մայրն էր սիրասուն:

Մեր հայրենիքի մայրն էր սիրասուն,
Անսքող վշտից աչքերով տրտում
Պատանքում էր մեզ ու ողբ էր ասում:

Պատանքում էր մեզ ու ողբ էր ասում,
Բուրվառ ու խնկով խաչին էր գամում՝
Սիրում էր նա մեզ ինչպես իր որդուն:
***
Սիրում էր նա մեզ ինչպես իր որդուն

Ինչին առիթով մեզ զոհաբերում
Խաչում, գլխատում ու չե՛ր երկնչում,
Դեռ հորդորում էր որ մնանք արթուն:

Մեր սերմն ու գենը շաղ տանք աշխարհում,
Ամենուր հասնենք ու դառնանք թիկունք
Գազանին կրթենք, բորենուն անգամ
Խաչասերումով սիրտ տանք աղավնում:

Ապրենք աշխարհում ու երկրպագենք,
Մորից առավել նվիրվենք Աստծուն
Դրախտի ճամփեն հավերժ նորոգենք:

Եվ դարեր անվերջ և մինչև հիմա
Հոգևոր հաց ենք, սերմը բարության,
Աշխարհի ցավով մեր սիրտն է ցավում:
***
Սրտիս խորքերից երգ եմ արարում,
Եվ ինձ կորցրած քեզ եմ փնտրում:
Զավակիս նման թանկ ես հարազատ
Մեր բախտի միակ արևն ես լուսե:

Ապրում ես հավերժ ու չես ծերանում,
Գերված ենք քեզնով՝ քո ճորտը հավետ
Երկրում օտար բախտ ենք որոնում
Սերն հայրենիքի օվկիան է անհուն:

Մոր աշխարհով ենք աշխարը չափում
Մայրը հավատն է ու լույսը մեր տան
Լեռներն են վկան Հայոց աշխարհի:

Թուր էր դարձավ խաչ ու մենք խաչակիր
Սիրում էր նա մեզ ինչպես իր որդուն,
Աշխարհի ցավից մեր սիրտն է ցավում:

Խրատներ

Գիտնականներն իմացութեամբ չորս կարգի են նախ, որ գիտէ, ու թէպետ գիտէ, որ գիտէ, ասում է՝ չեմ կարող ասել. սա իմաստուն է եւ հեզ, սովորիր սրանից. երկրորդ, գիտէ, որ չգիտէ եւ խոստովանում է իր անտեղեակութիւնը, թէ՝ չգիտեմ. սա եւս բարի է, սովորիր այդ. երրորդ, չգիտէ եւ անտեղեալ է, թէ չգիտէ եւ խօսում է տգիտաբար. սա հիմար է եւ չգիտէ իր պակասութիւնը, ինչպէս չար հիւանդը, արթնացրու սրան. չորրորդ, չգիտէ եւ գիտէ, որ չգիտէ, բայց դատարկամիտ հպարտութեամբ ձեւացնում է, թէ գիտէ, այսպիսին ամբարտաւան է, խուսափիր նրանից:

Չորս բան են տապալում թագաւորութիւնը՝ բացբերանութիւնը, չարակամներից չզգուշանալը, չարագործներին հանդուրժելը եւ սեփական ժողովրդին զրկելը:

Չորս պատճառ կայ, որ կործանում է թագաւորութիւնը, նախ՝ պակասութիւն եւ տգիտութիւն, երկրորդ՝ ագահութիւն եւ կաշառակերութիւն, երրորդ՝ անառակութիւն եւ զղջախոհութիւն. չորրորդ՝ կծծիութիւն. խա ամենից աւելի ատելի է ծառաների ու ռամիկների աչքում:

Չորս բան նշան է անբախտութեան. անառակներին սիրելը, քսու մարդկանց լսելը, անգետներին մտերմանալը եւ չարկամներից խորհուրդ հարցնելը:

Չորս տեսակ մարդուց պէտք է հեռու մնալ, որ իր թերին չի տեսնում եւ ուրիշին է բամբասում, որ ուրիշների բարուն չարով է պատասխանում, որ չի վստահում ընկերոջը եւ, վերջապէս, ստախոս է եւ մատնիչ:

Չորս բան կայ, որ ցրում է տրտումութիւնը եւ աչքերի լոյսը զորացնում, կանաչ տեսնելը, ջրի մօտ նստելը, երկնքի լոյսը տեսնելը եւ լաւ բանի հանդիպելը:

Չորս բան կայ, որ պակասեցնում է աչքի լոյսը, բոբիկ ճանապարհ գնալը, թշնամի տեսնելը, շատ լալը, բարակ բաների նայելը:

Չորս բան գիրանում են մարմինը. բաղնիք մտնելը, ախորժելի կորակուրներ ուտելը, փափուկ շորեր հագնելը եւ հաճելի բաներ լսելը:

Չորս բան առողջացնում են հիւանդին. կանոնաւոր սնուելը, անուշ բոյրեր հոտոտելը, գուսանի ձայնն ու անուշ քամին:

Չորս բանից է լինում հանկարծամահութիւնը. մեծ ուրախութիւնից ու շատ տրտմութիւնից, ուժեղ բարկութիւնից եւ խիստ վախնալուց:

Չորս տեղ են փորձում մարդուն, պաշտոնի ու առեւտրի մէջ, գինի խմելիս եւ ճանապարհին:

Չորս բանի չի կարելի հաւատալ. թշնամու սիրուն, ագահ մարդու երդմանը, անհաւատի դաշինքին եւ անառակ կնոջ սիրուն:

Չորս տեսակ մարդիկ չեն կարող հարստանալ. առաջինն այն է, որ խոյ է կռւեցնում, երկրորդ այն, որ աղաւնի է պահում, երրորդը, որ խաղամոլ է, որ դրամով գումար է խաղում, չորրորդն այն է, որ թողոցներում առուծախ է անում: Սրանք ամէն ինչով դժբախտ են:

Չորս բան կայ մարդու օգտակատ՝ թէ հոգուն, թէ մարմնին. միչ ուտելն ու քիչ խմելն ու քիչ քնելը: Քիչ ուտելն ու քիչ խմելը մարմնին օգուտ է. անձը թէթեւ է պահում եւ զգայութիւնները՝ հստակ ու մաքուր, մարմինը՝ առողջ: Քիչ խօսելն ու քիչ քնելն հոգուն է օգուտ, որովհետեւ եթէ շատ քնի՝ կը կուրանա միտքը, կը խափանուեն հանճարը եւ զգայութիւնները, իակ շատ խօսելը չորացնում է ուղեղը եւ պատուազրկում մարդուն: Եթէ տասն բան գիտես, մէկն ասա եւ ինչ պահիր. խօսքը գոհարի է նման. անտեղի մի խօսիր, որ չկորցնես. շտապով մի խօսիր, բարկութեամբ ու լալկան դէմքով մի խօսիր, այլ եթէ ուզում ես, որ խօսքդ անցնի, մեղմօրէն ու ժպտուն դէմքով խօսիր: